


ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԹԵՄԱՅԻ

1. Թեմայի վերնագիրը. «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը»
2. Ծածկագիրը. 01-SCI-2017
3. Թեմայի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր. № ShSU 01-SCI-2017, «01» մարտի 2017 թ.
4. Հաշվետու ժամանակահատվածը. «01» VI. 2018 թ.-ից «31» VIII. 2018 թ.
5. Կազմակերպության անվանումը, որտեղ իրականացվում է թեման. Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան
6. Թեմայի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը. Մարտիրոսյան Լ. Մ.
հեռախոսը. 055 77 03 99
Էլեկտրոնային փոստի հասցեն. mlevon2003@mail.ru
7. Հաշվետու ժամանակահատվածում թեմայի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները. 900 000 ՀՀ դրամ
8. Թեմայի ղեկավարի ստորագրությունը. 

«10» սեպտեմբերի 2018 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Բնական լանդշաֆտների և մասնավորապես բուսածածկույթի զբոսաշրջային-ռեկրեացիոն գնահատումը ներկայումս ստանում է առավել մեծ կարևորություն, քանի որ Հայաստանում զբոսաշրջությունը հանդիսանում է գերակա ուղղությունը, իսկ զբոսաշրջիկների թիվն ամեն տարի զգալիորեն աճում է:

Այս պայմաններում, տեղի է ունենում զբոսաշրջային հոսքերի էական փոփոխություն: Ներկայումս առավել մեծ պահանջարկ են վայելում անաղարտ բնական միջավայրում անցկացվող տուրերը, ինչի համար էլ անհրաժեշտություն կա գնահատել բուսական համալիրների, ինչպես նաև բուսածածկույթի առանձին բաղադրիչների և տիպերի զբոսաշրջային-ռեկրեացիոն կարողությունները:

Շիրակի պետական համալսարանի աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնում իրականացվող «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» գիտահետազոտական թեմայի աշխատանքները վեցերորդ եռամսյակում սկսվել են 2018թ. հունիսի 1-ից:

Հաշվետու ժամանակահատվածում, աշխատանքային խմբի կողմից կատարվել է հետազոտվող տարածքի (ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզեր) բուսածածկույթի գնահատման վերաբերյալ գրականության ուսումնասիրություն, ինչպես նաև բուսածածկույթի զբոսաշրջային-ռեկրեացիոն գնահատման մեթոդիկայի և դաշտային աշխատանքների պլանի մշակում:

Լանդշաֆտների և մասնավորապես տարբեր նպատակներով բուսածածկույթի գնահատման վերաբերյալ կան մշակված բազմաթիվ մեթոդներ [1; 2]:

Մեր կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների իրականացման համար առավել նպատակահարմար ենք համարել հանգուցային տեղամասերի հետազոտությունը, որի բարձր արդյունավետության մասին են վկայում նման մեթոդով իրականացված բազմաթիվ գիտական աշխատանքներ [3; 4]:

Դաշտային հետազոտությունների ժամանակ, բոլոր երեք հանգուցային տեղամասերի համար առանձնացվել են նույն ցուցանիշները՝ մեկ ընդհանուր գնահատման համակարգով: Այլ կերպ ասած ընտրվել են հատուկ ցուցանիշներ, որոնք էլ գնահատվել են, բոլոր երեք հանգուցային տեղամասերում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ որպես զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրս, առավել մեծ նշանակություն ունի անտառը, մեր կողմից նախընտրելի է համարվել անտառային համալիրի գնահատումը:

Որպես հետազոտվող տեղամասեր, մեր կողմից ընտրվել են այն անտառային տարածքները, որոնք առավել ինտենսիվությամբ են օգտագործվում զբոսաշրջիկների կողմից:

Հյուսիսային Հայաստանի (Շիրակ, Լոռի, Տավուշ) տարածքի բուսականության քարտեզի թվայնացման համար տեղեկատվական հիմք է ծառայել «Հայաստանի Ազգային Ատլասի» համանուն քարտեզը: ArcGIS 10.4 ծրագրային միջավայրում ըստ էության այդ քարտեզը ենթարկվել է կոորդինատական տեղակապման WGS 84 աշխարհագրական կոորդինատական համակարգում: Հաջորդ փուլով քարտեզը ենթարկվել է վեկտորիզացիայի, որի արդյունքում համապատասխան գունավորմամբ ներկայացվել են ուսումնասիրվող տարածքի բուսականության տիպերը:


Քարտեզի վրա առանձնացվել են թվով երեք Կրասարի, Գյուլագարակի և Հաղարծնի տեղամասերը, յուրաքանչյուրը 1 քառ.կմ մակերեսով: Նշված տեղամասերի աշխարհագրական կոորդինատները նախապես վերցվել են Google Earth ծրագրից, այնուհետև ներմուծվել ArcGIS միջավայր: Տեղամասերի կոորդինատները բերված են ստորև՝ աղյուսակ 1-ում.

Տեղամասի անվանումը	աշխարհագրական լայնությունը (°)	աշխարհագրական երկայնությունը (°)
Կրասարի	41.012 – 41.021	43.786 – 43.798
Գյուլագարակի	40.923 – 40.934	44.475 – 44.486
Հաղարծնի	40.782 – 40.791	44.901 – 44.914

Աղյուսակ 1 Կրասար, Գյուլագարակ և Հաղարծնի տեղամասերի աշխարհագրական կոորդինատները

Հետազոտության հավաստի արդյունքներ ստանալու համար կարևոր էր նաև անտառների զբոսաշրջային-ռեկրեացիոն հնարավորությունների գնահատման արդյունավետ մեթոդիկայի մշակումը: Որպես հիմք, մեր կողմից նպատակահարմար է համարվել Է.Ռեպչասի առաջարկած մեթոդիկան, որում անտառի ռեկրեացիոն գնահատումը կատարվում է չորս ցուցանիշների հիման վրա:

Քարտեզագրական աշխատանքների համար նպատակահարմար է եղել օգտագործել 1:100 000 մասշտաբի տեղագրական քարտեզ, որի վրա առանձնացվել են հետազոտվող տարածքի բուսական տիպերի արեալները: Այս նպատակով աշխատանքային քարտեզները թվայնացվել են: Մտորն ներկայացվում է հետազոտվող տարածքի թվայնացված քարտեզը, որի բնօրինակն ունի 1:100 000 մասշտաբ:



Նկ.1 Հյուսիսային Հայաստանի բուսածածկույթի քարտեզ-սխեմա

Ինչպես երևում է թիվ 2 աղյուսակից տարածական կառուցվածքի առավելագույն գնահատականը, ըստ առաջարկվող մեթոդիկայի, ստանում են ծառերի հստակ արտահայտված խմբային ֆորմացիաները, որոնք ունեն ոչ մեծ խտություն և լավ տեսանելիություն:

Ըստ բազմազանության առավել արժեքավոր են այն տնկարքները, որոնք կազմված են երկու, երեք տեսակներից, ունեն ոչ խիտ մատողաշ և ենթանտառ, ինչպես բազմազան խոտածածկույթ, որտեղ շատ են ծաղկավոր տեսակները: Բնական վիճակի գնահատման ժամանակ հաշվի է առնվում ծառատեսակների համապատասխանությունը տեղի բնական պայմաններին: Կարևոր է նաև ենթանտառի խոտածածկույթի անտրոպոգեն փոփոխվածության աստիճանը, ինչպես նաև արահետային ցանցի խտությունը:

Բուսածածկույթի և մասնավորապես անտառի ռեկրեացիոն պոտենցիալի կարևոր գործոններից է նաև որևէ հատվածի կայունությունը ռեկրեացիոն ծանրաբեռնվածությունների նկատմամբ: Կայունություն ասելով անհրաժեշտ է

հասկանալ անտառային կենսատրոփաբանական կեցության տարածքում ռեկրեանտների այն քանակությունը, որը չի առաջացնում որևէ բացասական երևույթ (դիգրեսիա):

№	Գնահատման ապեկտը	Գնահատվել է	Հաշվի են առնվել	
1	Անտառի էսթետիկական հատկանիշները	Անտառի տարածական կառուցվածքը	1.1	Ծառերի տեղաբաշխման տիպը
			1.2	Ծառուտի լրիվությունը
			1.3	Շարահարկայնությունը և տարիքը
			1.4	Տեսանելիությունը (մ)
		Անտառի տեսակային բազմազանությունը:	1.5	Ծառերի տեսակային կազմը
			1.6	Ենթանտառի տեսակային կազմը
2	Ռեկրեացիոն կայունությունը	Անտառի բնական վիճակը	2.1	Անտառի տարածման տեղի և ծառային կազմի համապատասխանությունը:
			2.2	Ենթանտառի համապատասխանությունը անտառի բնական վիճակին:
			2.3	Արահետային ցանցի մակերեսը:
3	Բնապահպանական	Անտառի ռեկրեացիոն կայունության գնահատումը:	3.1	Գերակշռող տեսակը
			3.2	Տնկարքների կառուցվածքը:
			3.3	Դիգրեսիայի աստիճանը:
4	Սանիտարական և հիգիենիկ պայմանները	Ֆիտոնցիդների առկայությունը:	4.1	Բուժման հնարավորությունները:
		Օդի աղտոտվածության գնահատականը:	4.2	Օդի աղտոտվածության աստիճանը:
		Միջատների առկայությունը:	4.3	Անտառի տարածման տեղի առանձնահատկությունը:

Աղյուսակ 2 Անտառի ռեկրեացիոն գնահատման համակարգի կառուցվածքը

Նախկինում հրատարակված մի շարք աշխատություններում [5; 6; 7;], որոնք նվիրված են ռեկրեացիոն կայունությանը, պարզվել է, որ տարբեր անտառային ֆորմացիաներ, ռեկրեացիոն ծանրաբեռնվածությունների նկատմամբ ունեն տարբեր կայունություն: Օրինակ որոշ անտառներում բացասական հետևանքները արդեն զգացվում են 2 մարդ-ժամ/հա ծանրաբեռնվածության ժամանակ: Այլ տիպի անտառներում ծանրաբեռնվածությունը կարող է հասնել մինչև 10մարդ-ժամ/հա, առանց որևէ բացասական փոփոխությունների: Օրինակ Ն.Վ.Ռամաշովը [8] կեչու և կաղամախու անտառների համար որպես ռեկրեացիոն նորմատիվ (առավելագույնը) համարում է 6մարդ-ժամ/հա ծանրաբեռնվածությունը: Փշատերևների և մասնավորապես սոճուտների համար, լեռնային ռելիեֆի պայմաններում, առավելագույն ծանրաբեռնվածությունը կարող է հասնել ընդամենը 2մարդ-ժամ/ հա [9, էջ` 25]:

Ինչպես երևում է թիվ 3 աղյուսակից տարածական կառուցվածքի առավելագույն գնահատականը, ըստ ներկայացվող մեթոդիկայի, ստանում են ծառերի հստակ արտահայտված խմբային ֆորմացիաները, որոնք ունեն ոչ մեծ խտություն և լավ տեսանելիություն:

Ըստ բազմազանության առավել արժեքավոր են այն տնկարքերը, որոնք կազմված են երկու, երեք տեսակներից, ունեն ոչ խիտ մատղաշ և ենթանտառ, ինչպես բազմազան խոտածածկույթ, որտեղ շատ են ծաղկավոր տեսակները: Բնական վիճակի գնահատման ժամանակ հաշվի է առնվում ծառատեսակների համապատասխանությունը տեղի բնական պայմաններին: Կարևոր է նաև ենթանտառի խոտածածկույթի անտրոպոգեն փոփոխվածության աստիճանը, ինչպես նաև արահետային ցանցի խտությունը:

Ցուցանիշ	Չափանիշ	Բալ
Ծառերի տեղաբաշխման տիպը:	Հավասարաչափ շարքերով	1
	Խառը	3
	Հստակ արտահայտված խմբային:	5
Ծառուտի լրիվությունը:	> 0,8	1
	0,7 – 0,8	2
	0,5 – 0,6	3
	0,3 – 0,4	4
	< 0,4	5
Տնկարքերի շարահարկայնությունը և տարիքը:	Միաշարահարկ, միատարիք	1
	Երկշարահարկ, տարբեր տարիքի:	3
	Բազմաշարահարկ, տարբեր տարիքի:	5
Անտառի դիտողականությունը:	> 10մ	1

Աղյուսակ 3 Անտառի տարածական կառուցվածքի գնահատումը

Ցուցանիշ	Չափանիշ	Բալ
Ծառուտի համապատասխանությունը տեղանքին	Տեսակային կազմը չի համապատասխանում տեղանքին:	1
	Տեղանքին համապատասխանում են ոչ դոմինանտ տեսակները	3
	Տեղանքին համապատասխանում են դոմինանտ տեսակները	5
Կենդանի հողածածկույթի համապատասխանությունը արմատական անտառին	Ամբողջովին մարդածին փոփոխություններով:	1
	Համապատասխանությունը մինչև 25% մակերեսում:	2
	Համապատասխանությունը մինչև 50% մակերեսում:	3
	Համապատասխանությունը մինչև 75% մակերեսում:	4
	Համապատասխանությունը մինչև 100% մակերեսում	5
Արահետային ցանցի մակերեսը	> 12%	1
	7 - 12%	2
	3 – 6%	3
	1 – 2%	4
	< 1%	5

Աղյուսակ 4: Անտառի բնական վիճակի գնահատումը

Մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքում պարզվեց, որ առավել մեծ ծանրաբեռնվածությունները են ստանում Լուռու և Տավուշի մարզի անտառները: Այս նպատակով ուսումնասիրվող բոլոր երեք մարզերում վերցվել են նույն մակերեսով տեղամասեր: Առավել մանրակրկիտ հետազոտության համար տեղամասի մակերեսի չափը սահմանվել է 1կմ²: Նկ. 1-ում ցույց են տրված այդ տեղամասերը: Տեղամասերի ընտրությունը պայմանավորված է զբոսաշրջային-ռեկրեացիոն գրավչությամբ:



Նկ. 2 Արախետային ցանց «Դիլիջան» ազգային պարկում
Լուսանկարը Լ. Մարտիրոսյանի

Տավուշի մարզի Հաղարծնի տեղամասն ունի առավել մեծ ծանրաբեռնվածություն ըստ մեր կատարած հաշվարկների, այստեղ ծանրաբեռնվածությունները ամռան ընթացքում, կարող են հասնել, ավելի քան 20 մարդ մարդ-ժամ/հա: Հաշվի անելով այն հանգամանքը, որ հետազոտվող տեղամասի որոշ հատվածներում լանջերի թեքությունը հասնում է ավելի քան 25°-ի, ծանրաբեռնվածության ցուցանիշները դառնում են ավելի վատ: Տեղամասի հատկապես ցածրադիր մասում բավականին զարգացած է արախետային ցանցը, ինչը վկայում է դիգրեսիայի մասին:

Բավականին մեծ ծանրաբեռնվածություններ են գրանցվել նաև Լոռվա մարզի անտառներում: Վերջինիս առանաձևահատկությունը կայանում է նրանում, որ անտառի տեսակային կազմում գերակշռում են փշատերև տեսակները: Ուսումնասիրվող տարածքում, որն իր մեջ ներառում է «Սոճուտ» դենդրոպարկը, անտառի տեսակային



Նկ. 3 Սոճուտի ենթանտառի դիգրեսիան ռեկրեանտների գործունեության հետևանքով
Լուսանկարը Լ. Մարտիրոսյանի

կազմի ավելի քան 70 տոկոսը սովորական սոճին (*Pinus sylvestris*) է: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ռեկրեանտների համար այս տարածքը օգտագործվում է գրեթե 10 ամիս, անհրաժեշտություն կա նաև իրականացնել դիտարկում գարնանային և աշնանային ամիսներին:

Ըստ վերևում բերված տվյալների, փշատերև անտառների համար, 2 մարդ-ժամ/ հա հանդիսանում է ծանրաբեռնվածության առավելագույն ցուցանիշ: Մեր կատարած հետազոտությունների արդյունքում գրանցվել են զգալիորեն ավելի մեծ ցուցանիշներ: Հուլիսին կատարած դիտարկումը ցույց է տվել 12 մարդ-ժամ/ հա, իսկ օգոստոսինը՝ 13 մարդ-ժամ/ հա: Ինչպես երևում է, ամառային ամիսներին թույլատրելի առավելագույն ցուցանիշները գերազանցվել են ավելի քան 6 անգամ:



Նկ. 2 Դիզրեսիայի ենթարկվող լանջ՝ Կրասարի տեղամասում:
Լուսանկարը Լ. Սարտիրոսյանի:

Վիճակը ավելի բարվոք է Կրասարի տեղամասում, որտեղ ռեկրեացիոն ծանրաբեռնվածությունը մոտ է նորմային: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կրասարի անտառները գրեթե բացառապես կազմաված են մեկ տեսակից՝ դողդոջուն կաղամախուց (*Populus tremula*), ռեկրեացիոն ազդեցությունը այստեղ չի կարող զգալի լինել՝ կենսաբազմազանության պատճառով: Ի տարբերություն Տավուշի և Լոռու հանգուցային տեղամասերի, Կրասարի տեղամասի համար առավել մեծ վտանգ է ներկայացնում անասունների չկարգավորված արածեցումը, ինչը նվազեցնում է կաղամախու ռեիկտային անտառի զբոսաշրջային-ռեկրեացիոն արժեքը:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ հաշվետու եռամսյակում նախատեսված բոլոր աշխատանքները կատարվել են լիարժեքորեն: հետազոտվել և քարտեզագրվել է տարածքի բուսականությունը, ինչ հիման վրա կազմվել է Հյուսիսային Հայաստանի տարածքի բուսաձածկույթի ռեկրեացիոն հնարավորությունների քարտեզը: Բացահայտվել են մի շարք երևույթներ, որոնք նպաստում են բուսաձածկույթի քայքայմանը և դրա հետևանքով բնական համալիրների զբոսաշրջային-ռեկրեացիոն արժեքի նվազմանը:

Հաշվետու ժամակահատվածում իրականացվել է ևս մեկ գործընթաց: Ճշգրտելու համար իրականացվողաշխատանքների արդյունավետությունը, մեր կողմից նախատեսվել էր իրականացնել սոցիոլոգիական հարցում ներգնա զբոսաշրջության և մասնավորապես լանդշաֆտների գեղագիտական գնահատման վերաբերյալ: Այս նպատակով կազմվել է հարցաթերթիկ, որում ընդգրկված է եղել չորս հարց:

Առաջին հարցը վերաբերել է լանդշաֆտների գեղագիտական նշանակությանը: Հարվածների 95%-ը կարծում է, որ ՀՀ լանդշաֆտները և բնական համալիրները ունեն զբոսաշրջային նշանակություն: Մա թույլ է տալիս ասելու, որ լանդշաֆտների գեղագիտական գնահատումն ունի կարևոր նշանակություն:

Երկրորդ հարցը վերաբերվում էր լանդշաֆտների գեղագիտական գործոններին: Հարցվածների 70%-ը գտնում է, որ բոլոր գործոնները միասին ունեն կարևոր նշանակություն, 5%-ը նախապատվությունը տալիս է ռելիեֆի գործոնին, 10%-ական տոկոսներ են հավաքել բուսածածկույթը և ջրագրությունը:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ աշխատանքային խմբի կողմից ընտրված են հետազոտման ճիշտ օբյեկտներ: Ընդհանուր առմամբ, սոցիոլոգիական հարցումը ծառայել է իր նպատակին:

Կատարված դաշտային և կամերալ հետազոտությունների նյութերի հիման վրա հեղինակային խմբի կողմից գրվել է գիտական հոդված, որը ներկայացվելու է հանրապետության առաջատար գիտական ժողովածուներից մեկում՝ տպագրության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Жукова В.К. Организация и методы комплексных физико-географических исследований. М. МГУ, 1964
2. Видина А.А. Методические указания по полевым крупномасштабным ландшафтными исследованиям. М. МГУ, 1962
3. Преображенский В.С. Ландшафтные исследования. М. „Наука,, ,1966.
4. Ромашов Л.П. Рекреационная оценка лес по ключевым участкам. М. 2016г.
5. Репшас Э. Оптимизация рекреационного лесопользования (на примере Литвы). – М. Наука, 1994.-240с.
6. Ярошенко Г. Д. Сосна и дуб Армении. - Ереван, 1929. - 164 с.
7. Магакьян А. К. Растительность Армянской ССР. Изд. АН СССР, Ереван, 1941, с. 119.

8. Ромашов Н. В. Рекомендации по организации и ведению хозяйства при рекреационном использовании равнинных лесов. – Харьков: Изд. НИИЛХА, 1987. – 176 с.
9. Колотова Е. В. Рекреационное ресурсоведение. РМАТ, М. 1999, с. 135.

№	Наименование	Единица измерения	Количество
1	Средства для благоустройства территории	шт.	500 000
2	Услуги по содержанию территории	шт.	
3	Услуги по озеленению территории	шт.	
4	Услуги по уходу за деревьями	шт.	
Итого			500 000

Подпись руководителя



Подпись и печать

Подпись и печать

Подпись и печать

«10» сентября 2018 г.

10.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

h/h	Անվանումը	Ֆինանսավորման ծավալը (ՀՀ դրամ)
1	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ եկամտային հարկը	900 000
2	Այլ ծախսեր, այդ թվում՝	-
	սարքեր և նյութեր	-
	գործուղումներ	-
Ընդամենը՝		900 000

Թեմայի ղեկավար՝


(ստորագրություն)

Մարտիրոսյան Լ. Ս.

(Ս.Ս.Հ.)

ՇՊՀ գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

Ռաֆֆի Քալաջյան

(Ս.Ս.Հ.)

«10» սեպտեմբերի 2018 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Աշխատանքի վարձատրության հողվածով 900 000 ՀՀ դրամը՝ ներառյալ եկամտային հարկը, ստացվել են թեմայում ընդգրկված աշխատակիցների կողմից՝ ըստ իրենց հաստիքային աշխատավարձերի:
2. Մարքեր և նյութեր՝ 0 դրամ:
3. Գործուղումներ՝ 0 դրամ:

Թեմայի ղեկավար՝ _____

ստորագրություն

«10» սեպտեմբերի 2018 թ.